ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ **2** ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 19 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Ալվարդ Գրիգորյանը և Խաչիկ Գրիգորյանը 2016թ. նոյեմբերի 30-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1.-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր»:

Դիմողները նշում են, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.02.2016թ. և 01.06.2016թ. որոշումներով, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-ñ¹ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթները, իրենց վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, բացառապես միայն այն պատճառով, որ «ՀԱՅՓՈՍՏ»-ի թիվ 0009 փոստային բաժանմունքում «ք. Երևան-0010 Հանրապետության 32/29» հասցեի փոխարեն գրվել է «ք. Երևան-0010 Հանրապետության 23/29» հասցեն, և «ՀԱՅՓՈՍՏ»-ի սխալ աշխատանքի պատճառով իրենք զրկվել են արդարադատությանը մասնակցելու իրենց սահմանադրական իրավունքից:

Ըստ դիմողների՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթները «հակասում են ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին, քանի որ ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը սահմանում է, որ <u>անձի իրավական վիճակը վատթարացնող</u> օրենքները և այլ իրավական ակտերը <u>հետադարձ ուժ չունեն</u>», և գտնում են, որ վիճարկվող դրույթները «հակասում են ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի դրույթին, քանի որ այն <u>անձի իրավական վիճակը վատթարացնող</u> օրենքն է, որով վատթարացվել է նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթը»:

Դիմողները գտնում են, որ խնդրո առարկա դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին, քանի որ չեն ապահովում անկախ և անաչառ դատարանի կողմից իրենց գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքն այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Դիմողների կարծիքով՝ վիճարկվող դրույթների առկայության պայմաններում իրենք զրկվել են վճռաբեկ բողոքի քննության իրավունքից, քանի որ առկա է օրենքով նախատեսված իրավական արգելք, որը խոչընդոտում է դատարանի մատչելիությունը:

**2.** Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է Ù»ñÅÙ³Ý մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի մասով, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 230-րդ հոդվածը /2006 թվականի հուլիսի փոփոխություններով/: Նշյալ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝բողոքին կցվում են սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և **բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները:** Սույն գործով խնդրո առարկա դրույթը դիմողը վիճարկում է «... բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները...» հարցի շրջանակներում, որի սահմանադրականությունն արդեն իսկ գնահատել է ՀՀ սահմանադրական դատարանը: Հետևաբար, նշյալ դրույթի մասով առկա է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ

հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի մասով գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

**1.** Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի մասով մերժել:

**2.** «Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

**3.** Բավարարել դիմողների՝ պետական տուրքի վճարումից իրենց ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

**4.** Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

19 դեկտեմբերի 2016 թվականի
ՍԴԿՈ/2-33